Արձանագրություն թիվ 7

ԿԻՐԱՌԱԿԱՆ ԱՐՎԵՍՏԻ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏ

02 փետրվարի 2017թ. ք.Իջևան

Նախագահ՝ Ա.Շ.Մարգարյան

Քարտուղար՝ Ք.Հ.Մխիթարյան

Ներկա էին խորհրդի 11 անդամները:

Օրակարգ

1. 2016-17թթ. ուս. տարվա երկրորդ կիսամյակի դասացուցակների քննարկում և հաստատում:
   /զեկ. Ա.Շ.Մարգարյան/
2. 2016-2017թթ. ուստարվա երկրորդ կիսամյակի ուսումնական գործընթացի կազմակեպման նախապատրաստական աշխատանքների քննարկում:
   /զեկ. Ա.Շ.Մարգարյան /

ԼՍԵՑԻՆ - Ֆակուլտետի խորհրդի նիստը բացեց և օրակարգը ներկայացրեց դեկանի ժ/պ, գիտական խորհրդի նախագահ Ա.Շ.Մարգարյանը:

Օրակարգը հաստատելուց հետո նիստի մասնակիցները անցան օրակարգի հարցերի քննարկմանը:

Նիստը վարում էր Ա.Շ.Մարգարյանը:

Օրակարգի առաջին հարցի վերաբերյալ զեկուցումով հանդես եկավ գիտական խորհրդի նախագահ Ա.Շ.Մարգարյանը: Նա ներկայացրեց 2016-17թթ. ուստարվա երկրորդ կիսամյակի դասացուցակներն ըստ կուրսերի և մասնագիտությունների: Դասացուցակը կազմվել է I, II, III և IV կուրսերի համար՝ երկշաբաթյա /համարիչ և հայտարար/ գրաֆիկով՝ համաձայն ուսումնական պլանների և անհատական ծանրաբեռնվածության: Նշվեց նաև որոշ փոփոխությունների մասին, որոնք կատարվել են տարբեր պատճառներով/ Ա.Միրզոյանի անհատական բեռնվածության „Գծանկարչություն-4” կրթական մոդուլը հատկացնել Մ.Ստեփանյանին , Դ.Պողոսյանի

„Աշխատանք նյութի վրա-6”/կերամիկա/՝ Տ.Բագամյանին և Ա.Չիբուխչյանի „Գունատեսություն-2”-ը Լ.Ֆլջյանին/:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ - <<Գծանկարի, գունանկարի և քանդակի>> ամբիոնի վարիչ Հ. Ասատրյանը, << Դեկորատիվ կիրառակա արվեստի և դիզայնի>> ամբիոնի վարիչ Մ.Հարությունյանը: Համակարծիք լինելով վերոնշյալ փոփոխություններին , նրանք առաջարկեցին ներկայացնել տնօրինությանը՝ հաստատել 2016-17թթ. ուստարվա երկրորդ կիսամյակի դասացուցակը:

ՈՐՈՇԵՑԻՆ - 2016-17թթ.ուստարվա երկրորդ կիսամյակի դասացուցակը ներկայացնել տնօրենության հաստատմանը:

Օրակարգի երկորդ հարցի մասին ֆակուլտետի գիտական խորհրդի նախագահ Ա.Շ.Մարգարյանը հանդես եկավ ուսումնական գործընթացի կազմակերպման հետ կապված ներֆակուլտետային խնդիրների վերաբերյալ հանձնարարականներով: Նա մասնավորապես նշեց, որ յուրաքանչյուր դասախոս պետք է պատրաստի իր կողմից դասավանդվող բոլոր առարկաների առարկայական փաթեթները՝ ցուցաբերելով ավելի բարձր պրոֆեսիոնալիզմ և ակտիվ օգտագործելով դասավանդման ժամանակակից մեթոդներ ՝ արդյունավետությունը բարձրացնելու նպատակով:

ՈՐՈՇԵՑԻՆ - Վերոնշյալ գործընթացի իրականացման վերահսկողությունը դնել ֆակուլտետի դեկանի և մասնագիտության պատասխանատուի վրա:

ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Ա.Շ.Մարգարյան

ՔԱՐՏՈՒՂԱՐ Ք.Հ.Մխիթարյան